ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«6» սեպտեմբերի 2022թ № 920-L

Ինկորպորացիա
20.05.2023թ. դրությամբ
Համաձայնեցված է ՀՀ կենտրոնական
բանկի հետ 16.06.2023թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԵՏՄ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ԿՈՂՄԻՑ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՄԻՋՈՑՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱԱՀ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՂ՝ ԲԱՆԿԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը լրաց. ՀՀ ՊԵԿ նախագահի 19.05.2023թ. N494-Լ հրաման)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 31-ի N406-Ն որոշման հավելվածի 6-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ԵՏՄ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից օտարերկրյա բանկի միջոցով վճարումներ կատարելու նպատակով էլեկտրոնային ԱԱՀ համակարգում տեղադրվող՝ բանկային փոխանցման կատարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը՝ համաձայն N1 հավելվածի:

(1-ին կետը լրաց. ՀՀ ՊԵԿ նախագահի 19.05.2023թ. N494-Լ հրաման)

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ

Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի հետ
04 հոկտեմբեր 2022 թվական

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի նախագահի
2022 թվականի սեպտեմբերի 6-ի
N 920-Լ հրամանի

ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԵՏՄ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ԿՈՂՄԻՑ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՄԻՋՈՑՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱԱՀ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՂ՝ ԲԱՆԿԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

(վերնագիրը լրաց. ՀՀ ՊԵԿ նախագահի 19.05.2023թ. N494-Լ հրաման)

1. Սույն հավելվածով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության (այսուհետ՝ ոչ ռեզիդենտ կազմակերպություն) կողմից անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) մատուցված էլեկտրոնային ծառայությունների, ինչպես նաև առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործող՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ ԵՏՄ ոչ ռեզիդենտ կազմակերպություն (անհատ ձեռնարկատեր)) կողմից էլեկտրոնային առևտրի շրջանակներում ֆիզիկական անձին մատակարարված ապրանքի մասով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները (այսուհետ՝ ԱԱՀ գումարներ), ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ԵՏՄ ոչ ռեզիդենտ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից օտարերկրյա բանկի միջոցով վճարելու նպատակով էլեկտրոնային ավելացված արժեքի հարկ (e-VAT) համակարգում (այսուհետ՝ էլեկտրոնային ԱԱՀ համակարգ) հարկային մարմնի կողմից տեղադրման ենթակա՝ բանկային փոխանցման կատարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

(1-ին կետը խմբ. ՀՀ ՊԵԿ նախագահի 19.05.2023թ. N494-Լ հրաման)

2. ԱԱՀ-ի գումարները վճարելու նպատակով ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ԵՏՄ ոչ ռեզիդենտ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից օտարերկրյա բանկի միջոցով արտարժույթով, բացառությամբ՝ ռուսական ռուբլով, բանկային փոխանցում կատարելու համար, էլեկտրոնային ԱԱՀ համակարգում տեղադրվում է հետևյալ տեղեկատվությունը.

1) օտարերկրյա միջնորդ բանկի (intermediary bank) տվյալները, մասնավորապես.

ա. թղթակից (օտարերկրյա) բանկի անվանումը՝ արժույթի փոխարկում իրականացնող Հայաստանի Հանրապետության առևտրային բանկին սպասարկող թղթակից (օտարերկրյա) բանկը,

բ. թղթակից բանկի հասցեն,

գ. թղթակից բանկի ՍՎԻՖՏ (SWIFT) կոդը,

2) ստացողի (շահառուի) բանկի (beneficiary's bank) տվյալները, մասնավորապես.

ա. ստացողի (շահառուի) բանկի անվանումը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համար փոխարկում իրականացնող Հայաստանի Հանրապետության առևտրային բանկը, որն իրականացնելու է արժույթի փոխարկումը հայկական դրամի,

բ. ստացողի (շահառուի) բանկի հաշվեհամարը(ները)՝ Հայաստանի Հանրապետության առևտրային բանկի հաշվեհամարը(ները) ըստ համապատասխան արժույթի(ների), որը բացված է թղթակից (օտարերկրյա) բանկում(երում),

գ. Հայաստանի Հանրապետության առևտրային բանկի հասցեն,

դ. Հայաստանի Հանրապետության առևտրային բանկի ՍՎԻՖՏ (SWIFT) կոդը,

3) ստացողի (շահառուի) տվյալները (beneficiary), մասնավորապես.

ա. ստացողի (շահառուի) հաշվեհամարը (beneficiary account number)՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համար փոխարկում իրականացնող Հայաստանի Հանրապետության առևտրային բանկում բացված բանկային հաշվեհամարը(ները), ըստ համապատասխան արժույթի(ների), որին մուտքագրված միջոցները ենթակա են փոխարկման հայկական դրամի,

բ. ստացողի (շահառուի) անվանումը (beneficiary name)՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համար փոխարկում իրականացնող Հայաստանի Հանրապետության առևտրային բանկի անվանումը,

գ. ստացողի (շահառուի) հասցեն (beneficiary address)՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համար փոխարկում իրականացնող Հայաստանի Հանրապետության առևտրային բանկի հասցեն,

4) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված միասնական հաշիվը (այսուհետ՝ գանձապետարանում վարվող միասնական հաշիվ)՝ 900008000490,

5) Էլեկտրոնային ԱԱՀ համակարգում հարկատուին պետք է տրվի ցուցում (հիշեցում), որ արտասահմանից վճարում կատարելու ժամանակ, վճարման հանձնարարականում պարտադիր պետք է լրացվի գանձապետարանում վարվող միասնական հաշիվը՝ 900008000490 և հարկային մարմնում հաշվառված ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ԵՏՄ ոչ ռեզիդենտ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), որոնք պետք է նշվեն վճարման հանձնարարականի «նպատակ» դաշտում (details of payment):

(2-րդ կետը լրաց. ՀՀ ՊԵԿ նախագահի 19.05.2023թ. N494-Լ հրաման)

3. ԱԱՀ-ի գումարները վճարելու նպատակով ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ԵՏՄ ոչ ռեզիդենտ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ռուսական ռուբլով բանկային փոխանցում կատարելու նպատակով Էլեկտրոնային ԱԱՀ համակարգում տեղադրվում է հետևյալ տեղեկատվությունը.

1) ստացողի (շահառուի) բանկի (банк получателя) տվյալները, որի դերում հանդես է գալիս թղթակից բանկը, մասնավորապես.

ա. թղթակից բանկի անվանումը՝ ռուսական ռուբլով փոխարկում իրականացնող Հայաստանի Հանրապետության առևտրային բանկին սպասարկող Ռուսաստանի Դաշնության որևէ բանկ,

բ. թղթակից բանկի հասցեն,

գ. թղթակից բանկի ԲԻԿ (БИК) կոդը, որը կիրառվում է Ռուսաստանի Դաշնության տարածքում բանկի նույնականացման համար և կազմված է 9-նիշերից,

դ. թղթակից բանկի թղթակցային հաշիվը Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկում,

2) ստացողի (շահառուի) (получатель) տվյալները, որի դերում հանդես է գալիս վերջնական շահառուին սպասարկող բանկը, մասնավորապես.

ա. ստացողի (շահառուի) անվանումը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համար փոխարկում իրականացնող Հայաստանի Հանրապետության առևտրային բանկը(երը), որը իրականացնելու է ռուսական ռուբլու փոխարկումը հայկական դրամի,

բ. ստացողի (շահառուի) հաշվեհամարը(ները)՝ Հայաստանի Հանրապետության առևտրային բանկի հաշվեհամարը(ները) ռուսական ռուբլով, որը բացված է Ռուսաստանի Դաշնության որևէ բանկում(երում),

գ. ստացողի (շահառուի) հասցեն՝ սույն ենթակետով նշված Հայաստանի Հանրապետության առևտրային բանկի հասցեն Հայաստանի Հանրապետությունում,

դ. ստացողի (շահառուի) հարկային հաշվառման համարը (ИНН) Ռուսաստանի Դաշնությունում (ըստ առկայության)։

ե. ստացողի (շահառուի) հարկային հաշվառման կանգնելու պատճառի կոդը (КПП) Ռուսաստանի Դաշնությունում, որը տրվում է հարկային հաշվառման համարին (ИНН) ի լրումն (ըստ առկայության),

3) վերջնական շահառուի տվյալները, որոնք նշվում են վճարման հանձնարարականի «նպատակ» դաշտում (Назначение Платежа), մասնավորապես.

ա. վերջնական շահառուի հաշվեհամարը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համար փոխարկում իրականացնող Հայաստանի Հանրապետության առևտրային բանկում բացված բանկային հաշվեհամարը(ները) ռուսական ռուբլով, որտեղ մուտքագրված միջոցները ենթակա են փոխարկման հայկական դրամի,

բ. վերջնական շահառուի անվանումը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համար փոխարկում իրականացնող Հայաստանի Հանրապետության առևտրային բանկի անվանումը,

գ. գանձապետարանում վարվող միասնական հաշիվը՝ 900008000490,

4) Էլեկտրոնային ԱԱՀ համակարգում, հարկատուին պետք է տրվի ցուցում (հիշեցում), որ Ռուսաստանի Դաշնությունից ռուսական ռուբլով վճարում կատարելու ժամանակ, վճարման հանձնարարականի «նպատակ» դաշտում լրացվող տվյալների հետ միասին պարտադիր պետք է լրացվի գանձապետարանում վարվող միասնական հաշիվը՝ 900008000490 և հարկային մարմնում հաշվառված ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ԵՏՄ ոչ ռեզիդենտ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)։

(3-րդ կետը լրաց. ՀՀ ՊԵԿ նախագահի 19.05.2023թ. N494-Լ հրաման)